ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 1327
18 JUL 2020
Կից Նշում

«16» հուլիսի 2020թ. N 2320-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 28 փետրվարի 2019 թվականի N 162-Ն 30-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103115820 առ 14.07.2020թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 3 դեղի հավաստագրի վրիպակ՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

16.07.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Ստաց. 17.07.20 ժ. 12²⁰

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. հուլիսի 16- ի N 2320 – Ա հրամանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ)

| հ | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | երկիրը | գրանցման հավաստագրի իրավատերը | երկիրը | բացթողման կարգը | եզրակացության համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ասկոֆեն Լ | ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին | դեղահատեր | 200մգ+200մգ+40մգ; (10) բլիստերում | "Լուբնիֆարմ" ՀԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Բարվինկովա փ. 16 | Ուկրաինա | "Լուբնիֆարմ" ՀԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի, Բարվինկովա փ. 16 | Ուկրաինա | ԱԴ | 19242 07.07.2020 |
| 2. | Կարդիտոն | լառկարնիտին | լուծույթ ներքին ընդունման | 100մգ/մլ; (10) ապակե սրվակ 10մլ | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 65, Քվեմո Ֆոնիչալա փ., 0165 Թբիլիսի- երկրորդային փաթեթավորող, որակի | Բելառուս | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 65, Քվեմո Ֆոնիչալա փ., 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 19234 07.07.2020 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | և բաց թողնման հսկող, Անֆարմ Հելլաս Ս.Ա., Սքսիմատարի Վիոտիաս, 32009, Հունաստան- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող՝ | | | | | |
| 3. | Ադենոպրոսին | ադենոպրոսինի ակտիվ համալիր | մոմիկներ ուղիղաղիքային | 150մգ; (10/2x5/) | Ֆարմապրիմ ՍՌԼ, 5,Կրինիլոր փ., Պորումբենի, Կրիուլենի շրջան, ՄԴ-4829- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական), բաց թողման հսկող, Հանրային Առողջության Ազգային Գործակալություն, 67-Ա, Գհ. Ասաչի փ., ՄԴ-2028, Քիշինև, Մոլդովա- որակի հսկող (մանրէաբանական) | Մոլդովա | Բիոտեհնոս ՍՌԼ, Մարիա Սեբոտարի փ., 20, Քիշինև | Մոլդովա | Դ | 19198 07.07.2020 |